

ՀԱՆԳԻՍ ՄԻՍԱՐ ՅԱԿՈԲԵԱՆԻ 1923-2001

Նոյեմբեր 22ին, Զորեմբաբի երեկոյեան, իր մահկանացուն կնքեց Ս. Թարգմանչաց Վարժարանի երկարատեւ ճշդապահ պատշտօնեայ Միսաք Յակոբեան: Յուդարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ յաջորդ օրը, երեկոյեան ժամերգութեան աւարտին, Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Տ. Արիս Եպս. Շիրվանեանի: Յուդարկաւորներուն մէջ կային Թարգմանչաց նախկին շրջանաւարտներ եւ Երուսաղէմի հասարակութիւնը:

Հանգուցեալին մարմինը ամփոփուեցաւ Ս. Փրկիչ Ազգային գերեզմանատան մէջ: Ապա, հոգեւորներ հրամցուեցաւ Ե.Հ.Բ.Մ. սրահին մէջ:

ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Միսաք Յակոբեան ծնած է Երուսաղէմ 1923ի Օգոստոս 20ին: Նախնական ուսումը կը ստանայ Սրբոց Թարգմանչաց վարժարանէն ներս, ապա կը յաճախէ Terra Sancta Collegeը: Եղբայրը՝ Արրահամ, որ կը զբաղուէր վաճառականութեամբ օգնականի պէտք կ'ունենայ եւ 1968-40 թուականներուն Միսաք ստիպուած կ'ըլլայ եղբորը օգնելու: Այնուհետեւ իր ուսումը կը շարունակէ, իսկ 1948ի պատերազմին դարձեալ կը զբաղի վաճառականութեամբ:

1958ին կը մտնէ ուսուցչութեան ասպարէզ՝ միանալով Ս. Թարգմանչաց Վարժարանի ուսուցչական կազմին: Այսպիսով, մինչեւ 1994 թուականը 40 տարիէ աւելի կը դասուանդէ Արաբերէն լեզու, պատմութիւն եւ աշխարհագրութիւն, միեւնոյն ժամանակ պաշտօնավարելով որպէս մանչերու մարզիչ եւ Ընդհանուր պատասխանատու:

Կարգ մը առիթներով յօդուածներ գրած է արաբական թերթերու մէջ: Քաջածանօթ էր Արաբական Գրականութեան: Մեծ է իր բերած վաստակը վարժարանիս հայ շրջանաւարտները արաբերէնի իմացութեամբ կրթելու:

Ուսուցիչ Միսաք Յակոբեան ի Տէր հանգեաւ 78 տարեկան հասակին:

Խունկ եւ աղօթք իր անմոռաց յիշատակին: Յաւիտեանական հանգիստ եւ խաղաղութիւն իր հոգիին: